գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (տե՛ս, Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը կամ թիվ ԵԱՔԴ/0554/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական ծախսերը պետք է կատարվեն փաստացիորեն անհրաժեշտաբար և, որ դրանց քանակը ողջամիտ է (տե՛ս, Ֆիլիպն ընդդեմ Հունաստանի թիվ 1 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռը, Շարքեր Ա, էջ 25, կետ 74, կամ Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի 1988 թվականի մարտի 25-ի վճիռը):

Դատարանն արձանագրում է, որ Անետա Սարգսյան ԱՁ-ի և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի միջև 21.07.2025 թվականին կնքվել է իրավաբանական օգնություն ցույց տալու հանձնարարության վերաբերյալ թիվ 2025/07-01 պայմանագիրը, որի գինը կազմել է 800.000 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը և պարտադիր այլ վճարները:

Սույն գործով Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է հայցադիմում, ապացույցներ, դիրքորոշում, միջնորդություններ, գործը քննվել է գրավոր ընթացակարգով:

Դատարանն, ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, նկատի ունենալով, որ հայցը բավարարվում է, գտնում է, որ սույն գործով փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը կազմում է 350.000 ՀՀ դրամ, ուստի պետք է Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի բռնագանձել 350.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/231» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 17.07.2025 թվականի թիվ 4 արձանագրության 1.2-րդ, 1.3-րդ, 1.4-րդ և 2.1-րդ կետերի որոշումներն անվավեր ճանաչելու, «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը թիվ 1 չափաբաժնի մասով բավարար գնահատելու, ընտրված մասնակից ճանաչելու և մատակարարման պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի.

անվավեր ճանաչել թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/231» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատող հանձնաժողովի 17 հուլիսի 2025թ թիվ 4 արձանագրության 1.2-րդ (*գնահատող հանձնաժողովի կողմից*

արձանագրված անհամապատասխանությունների մասին որոշումը), 1.3-րդ (*հայտն անբավարար գնահատելու և մերժելու որոշումը*), 1.4-րդ (*առաջին տեղ գրաղեցրած մասնակցի հայտը գնահատելու մասին որոշումը*) և 2.1-րդ (*գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումը*) կետերի որոշումները:

Հայցը՝ մնացած՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը թիվ 1 չափաբաժնի մասով բավարար գնահատելու, ընտրված մասնակից ճանաչելու և մատակարարման պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասով, մերժել:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի բռնագանձել 395.000 (երեք հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի բռնագանձել 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am